Քննարկվել և հավանության է արժանացել
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի
«08» 01 2025թ. № 4 նիստում

Հաստատվել է՝
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կոլեգիալ կառավարման խորհրդի «13» 01 2025թ.
N 1-25 նիստում, խորհրդի նախագահ՝ Ս. Դավիդյան
/ստորագրություն/

ՀՀ ԿԳՄՍՆ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՋԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման <<Չարենցավանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ քոլեջ) քաղաքականությունը ուղղված է քոլեջի կողմից իրականացվող գործունեության և գործընթացների վերաբերյալ հաշվետվության ներկայացմանը շահակից կողմերին:

1.2. Սույն քաղաքականությունը հաստատում է քոլեջի շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման մեթոդների և մեխանիզմների նկատմամբ ընդհանուր պահանջները և նկարագրում հաշվետվողականության ապահովման բոլոր փուլերը:

1.3. Քոլեջի շահակից կողմերի առջև հաշվետվողականության ապահովման տակ հասկանում ենք քոլեջի գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացումը քոլեջի բոլոր շահակից կողմերին:

1.4. Այս առումով քոլեջի նպատակներն ուղղված են խթանելու քոլեջի թափանցիկությունը, հաշվետվողականությունը և դրա հիման վրա հետադարձ կապի մեխանիզմով քոլեջի գործունեության որակի բարելավմանը:

2. Շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման քաղաքականություն

2.1. Քոլեջի շահակիցների առջև հաշվետվողականությունը հիմնականում ներառում է՝

- Ֆինանսական հաշվետվություն,
- Կրթական գործունեության հաշվետվություն,
- Քոլեջի ներքին գնահատման տեղեկանք (քոլեջի տնօրենը յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում պարտավոր է ներկայացնել ներքին գնահատման տեղեկանք, որը պարունակում է տեղեկություններ տարվա ընթացքում քոլեջի իրականացրած գործունեության մասին):

2.2. Հաշվետվություններում արտացոլվող ինֆորմացիան և տվյալները պետք է լինեն արդիական, անվերապահ և օբյեկտիվ:

2.3. Քոլեջն իր գործունեության հաշվետվողականությունը շահակիցների առջև կազմակերպում և իրականացնում է՝

- քոլեջի կառավարման խորհրդում,
- քոլեջի մանկավարժական խորհրդի նիստերին,
- քոլեջի տարեկան հաշվետվության միջոցով,
- սոցիալական ցանցերում պաշտոնական էջի միջոցով:

2.4. Քոլեջի կողմից կազմակերպվող հաշվետվողականության միջոցառումները ուղղված են կրթության կատարելագործման և մրցունակության բարձրացման խնդիրների լուծմանը:

2.5. Քոլեջի հաշվետվողականության ապահովման գործիքներն են՝

- քոլեջի ֆեյսբուքյան պաշտոնական էջը,
- քոլեջի գործունեության (խորհուրդների և այլ նիստերի) արձանագրությունները,
- ընթացիկ և այլ տիպի հաշվետվությունները:

2.6. Հաշվետվողականության ապահովման մեթոդներն են՝

- Քոլեջի գործունեության հաշվետվությունների ներկայացում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:
- Քոլեջի գործունեության արդյունքների ներկայացումը կառավարման խորհրդում, տնօրինական խորհրդում, մակավարժական խորհրդում:
- Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից ստորաբաժանման գործունեության արդյունքների ներկայացումը աշխատակիցներին:
- Տարբեր տեսակի հաշվետվությունների ներկայացումը կառավարման տարբեր մակարդակների վրա:
- Քոլեջի ընթացիկ իրադարձությունների լուսաբանում սոցիալական ցանցերի պաշտոնական էջում:

2.7. Հաշվետվողականությունը քոլեջին հնարավորություն է տալիս՝

- հետադարձ կապի մեխանիզմով շահակիցներից ստանալ կարծիքներ,
- պարզել շահակիցների կարիքները և պահանջները,
- վերլուծել հետադարձ կապի միջոցով ստացված արձագանքները,
- գնահատել իր գործունեության արդյունավետությունը,
- բարելավել և կատարելագործել քոլեջի գործունեության բոլոր ուղղությունները,
- զարգացնել առավելությունները:

3. Ներքին հաշվետվողականություն

Քոլեջի կառուցվածքային միավորների անմիջական ենթակայությունը և հաշվետվողականությունը ներկայացված է ստորև՝ քոլեջի կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկերում:



4. Արտաքին հաշվետվողականություն